Ուսուցիչների պարտադիր վերապատրաստում

Աշխարհագրություն

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես եմ ուսուցանում «Համաշխարհային տնտեսություն» թեման

Կատարող՝ ք. Երևանի հ. 50 հիմն. դպրոցի ուսուցչուհի Շաքե Գաբոյան

Դասախոս՝ Աշոտ Խաչատրյան

ԵՐԵՎԱՆ-2022

ԼԵՌՅԻ ԱՆՎԱՆ 65 ԴՊՐՈՑ

Հետազոտական ավարտական աշխատանք

Հետազոտական աշխատանքն անհրաժեշտ է մեքենագիր և MS WORD ձևաչափով ներկայացնել սահմանված ժամկետների ընթացքում

Էզաչափ՝ A4

Տառատեսակը՝ Unicode

Տառաչափը՝ 12

Տողերի հեռավորությունը՝ 1,5

Էջադրման չափերը՝ ձախից 3 սմ, աջից 1,5 սմ, վերևից ներքև 2 ական սմ

Էջերը համարակալել ներքևի աջ անկյունում, էջերի քանակը 15-20

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքի պատրաստման ընթացքում անհրաժեշտ է հետևել հետևյալ ընդհանրական կազմատիպի վրա.

- Տիտղոսաթերթ
- Բովանդակություն
- Ներածություն
- Պարագրաֆներ/մասեր
- Եզրակացություններ, առաջարկություններ
- Օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ
- Բոլոր ցանկերը պետք է սկսվեն առաջին էջից

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1 Համաշխարհային տնտեսություն. Ընդհանուր ակնարկ

Ազգային տնտեսություն

Համաշխարհային տնտեսություն, ճյուղային կառուցվածքը

Համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալները

Արդյունաբերություն

Գյուղատնտեսություն

Աշխատանքի աշխարհագրական բաժանում

Գլուխ 2 Ինչպես եմ ուսուցանում «Համաշխարհային տնտեսություն» դասը (7-րդ դաս., դաս՝ 16)

Օրվա դասի պլան

Եզրակացություն

Օգտագործված գրականություն և հղումներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի դարաաաշրջանում էլ ավելի են խորոնում տնտեսական կյանքի բոլոր ոլորտների միջազգայնացման գործընթացները: Դրանցում, անշուշտ, մեծ դեր են խաղում միջազգային տնտեսական հարաբերությունները, որոնք աշխատանքի միջազգային բաժանման արդյունք են: Համաշխարհային տնտեսության և ազգային տնտեսությունների առաջընթացը ներկա պայմաններում կապված է միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման հետ, որի շնորհիվ որակական փոփոխությունների են ենթարկվում համաշխարհային արտադրություն, գին և առևտուր, միջազգային ֆինանսներ, արտադրության գործոնների շարժ, տնտեսական ինտեգրման և գլոբալացման գործընթացներ և այլ կատեգորյաներ:

«Համաշխարհային տնտեսություն» թեման դպրոցում դասավանդելիս մեր առարկան պահանջում է նոր տեղեկատվություն բարձր շարժունակություն ունեցող աշխարհատնտեսական կապերի մասին, որի գիտական վերլուծության հիման վրա հիշյալ կապերի վերաբերյալ անհրաժեշտ են լինում նոր ժամանակակից մեկնաբանություններ:

Յուրացնելով թեման աշակերտները ձեռք են բերում համաշխարհային տնտեսության, նրա առանձին ոլորտների և ճյուղերի, միջազգային տնտեսական հարաբերությունների բօգտագործման և բնապահպանության աշխարհագրական առանձնահատկությունների, տարածքային դրսևորումների, տեղաբաշխման ու տարածքային կազմակերպման վերաբերյալ գիտելիքներ:

Հաշվի առնելով դասընթացին տրամադրված սահմանափակ ժամաքանակը շատ կարևոր է, որ ուսուցչի կողմից թեմայի դասավանդումը կատարվի ճիշտ ընտրված մեթոդիկայով, նպատակները լինեն իրատեսական, վերջնարդյունքը՝ գոհեցնող:

Իմ հետազոտական աշխատանքում համառոտ կներկայացվի, թե ինչպես եմ ուսուցանում «Համաշխարհային տնտեսություն» թեման հիմնական դպրոցի 7-րդ դասարանում: Կներկայացվի նաև «Համաշխարհային տնտեսություն» դասը (դասագիրք՝ դաս 16), իր օրվա պլանով:

Համաշխարհային տնտեսությունը (ինտերէկոնոմիկան), միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգի միջոցներով աշխատանքի միջազգային բաժանման հիման վրա աշխարհի երկրների ազգային տնտեսությունները միավորող տնտեսավարման բազմամակարդակ, գլոբալ համակարգ է:

Ընդհանուր առմամբ, **համաշխարհային տնտեսությունը** կարելի է բնորոշել որպես միջազգային հարաբերություններով միավորված ազգային տնտեսությունների և ոչ պետական կառույցների ամբողջություն: Համաշխարհային տնտեսությունը առաջացել է աշխատանքի միջազգային բաժանման շնորհիվ, որը իր հետևից բերեց ինչպես արտադրության բաժանում (այսինքն՝ միջազգային մասնագիտացում), այնպես էլ դրա միավորում՝ կոոպերացիա: Մարդկանց կողմից գոյության միջոցների ստեղծման եղանակներն աշխարհում խիստ տարբերվում են: Արևմտյան Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի երկրները, Ճապոնիան և Ավստրալիան արդյունաբերությամբ ամենազարգացածներն են: Դրանք իրենց ապրանքներն ու ծառայությունները վաճառում են աշխարհով մեկ: Տնտեսապես թույլ զարգացած է Կենտրոնական Ասիայի և Աֆրիկյան երկրների մեծ մասը, որոնց արդյունաբերության ճյուղերը սակավաթիվ են: Դրանցից որոշ երկրներ մասնագիտանում են միայն մեկ արտադրանքի թողարկման ուղղությամբ : Շատ ապրանքներ արտադրվում են միայն տեղական շուկայի համար:

Համաշխարհային տնտեսության զարգացման գործում անցել են մի քանի սերունդ՝

Արտադրության նախաարդյունաբերական փուլ, 17-րդ դարի վերջ Համաշխարհային տնտեսությունն առաջացավ արտադրության նախաարդյունաբերական փուլում՝ միջազգային առևտրի ի հայտ գալով և ձևավորվեց մինչև 17-րդ դարի վերջ:

18-րդ դարասկզբից մինչև 19-րդ դարի կեսերին: Այն բնութագրվում է ապրանքների արտադրության հետագա զարգացմամբ, որի աճող զանգվածը պարբերաբար փոխանակվում է երկրների միջև, արտաքին առևտրի վերափոխումը ազգային տնտեսության մի մասի. համաշխարհային շուկայի առաջացումը՝ կապիտալիզմի բարձրագույն նվաճումը:

19-րդ դարավերջից մինչև 20-րդ դարասկզբներ: Այս ժամանակահատվածում էր, որ ավարտվեց համաշխարհային տնտեսական համակարգի ձևավորումը մեքենայական լայնամասշտաբ արտադրության հիման վրա:

20ր-րդ ի 20-ից 80-ական թվականներ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո սկսվեց համաշխարհային տնտեսության համակարգում որակական փոփոխությունների գործընթաց, որն ավարտվեց գաղութային համակարգի անկմամբ:Համաշխարհային տնտեսությունը բաժանվեց երկու հիմնական համակարգի ՝ սոցիալիստական և կապիտալիստական, և լրացվեց գաղութատիրական շատ երկրներով, որոնք իրենց ազատեցին արտաքին տնտեսական կախվածությունից: Այս ժամանակահատվածում շուկայական տնտեսությունը զգալիորեն փոխակերպվեց սոցիալական կառավարման: Շուկայական գործիքները սկսեցին ավելի սերտորեն միահյուսվել մակրո մակարդակի կառավարության կարգավորմանը: Արտադրական ուժերի և տնտեսական հարաբերությունների զարգացման հետ ակտիվորեն ստեղծվեց խառը տնտեսություն: Համաշխարհային տնտեսության շուկայական համակարգը XX դարի 80-ականների կեսերին ձևավորվեց ավելի քան 160 երկրների կողմից, ներառյալ արդյունաբերականորեն զարգացած ավելի քան 30 երկրներ:

XX դարի 80-ականների վերջ 90-ականների սկիզբ: Այս փուլի առանձնահատկությունն է արտադրության մեջ ինտեգրման գործընթացների աճը, տարբեր երկրներում ապրանքների և բաղադրիչների արտադրության հետ կապված դրանց կազմակերպական և տնտեսական ձևերի զարգացումը: Համաշխարհային տնտեսության ձևավորման վրա XX դարի 90-ականներին ազդել է Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասի տարանջատումը սոցիալիստական տնտեսական համակարգից:

Ընդհանուր առմամբ, համաշխարհային տնտեսությունը 20-րդ դարի վերջին՝ 21-րդ դարի սկզբին, պահպանելով բազմազանությունը, այնուամենայնիվ, ավելի ամբողջական, գլոբալ, ինտեգրված և դինամիկ է, քան 20-րդ դարի կեսերին: Դրան բնորոշ դարձան նոր տնտեսական կապերն ու հարաբերությունները, ընդլայնվեցին մաքսային և քաղաքական միությունները: Կազմավորման գործընթացը դեռ չէր ավարտվել, քանի որ այն կանխորոշող բոլոր գործոնների խորը զարգացումը շարունակվում է: Համաշխարհային տնտեսության զարգացման վրա ազդում են հետևյալ գործոնները՝

- գիտական և տեխնոլոգիական առաջընթացի զարգացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների վերափոխում համաշխարհային տնտեսության զարգացման կարևորագույն կողմերից մեկը,
- ազգային տնտեսությունների աճող փոխկախվածությունը,

- արտաքին տնտեսական հարաբերությունների ընդհանուր ազատականացումը,
- արտադրության գործոնների միջազգային շարժման ակտիվացման բարձր մակարդակ՝ աշխատուժ, կապիտալ, տեխնոլոգիա, արտադրության միջոցներ,
- արտադրության և կապիտալի միջազգայնացում,
- անկախ ֆինանսական համակարգի ձևավորում, որն անմիջականորեն կապված չէ ապրանքների տեղաշարժի սպասարկման հետ,
- գլոբալ խնդիրների լուծումներ և այլն:

Ժամանակակից համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական միտումը արտադրության միջազգայնացումն է:Դրա հիմնական գործոնն էր զարգացած երկրների անցումը XX դարի 60-80-ական թվականներին տեղեկատվական տեխնոլոգիաների գերակշռությամբ գերբարձր տեխնոլոգիական բազային:

Ազգային տնտեսություն

Զարգացման փուլերը

Տնտեսական գործունեության գերնպատակը մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումն է: Յուրաքանչյուր երկրում դարերի ընթացքում (պատմականորեն) ձևավորվում է մարդկանց գործունեության բնագավառների յուրահատուկ համակարգ («հավաքածու»), որը պայմանավորված է տվյալ երկրի բնական պայմաններով ու ռեսուրսներով, ինչպես նաև աշխարհագրական դիրքով, աշխատանքային ռեսուրսների մասնագիտական հմտություններով և այլ գործոններով:

Տվյալ երկրում մարդկային գործունեության բնագավառների պատմականորեն ձևավորված համակարգը կոչվում է ազգային տնտեսություն:

Ամենավաղ ժամանակներում բոլոր երկրների տնտեսության հիմքը **գյուղատնտեսությունն** էր: Երկրի տնտեսական (հասարակական) զարգացման այդ փուլն անվանում են **գյուղանտեսական (ագրարային),** իսկ արդյունաբերության առնչությամբ՝ **մինչարդյունաբերական:**



Ներկայումս ագրարային են նախկին գաղութային երկրները, որոնք չունեն զարգացման լայն հնարավորություններ: Այդ երկրների համախառն ազգային եկամտի մեջ մեծ է գյուղատնտեսության բաժինը՝ կազմելով 30–45%, իսկ Սոմալիում՝ նույնիսկ 65 %:

Տնտեսական զարգացման միջին մակարդակն **արդյունաբերական՝ ինդուստրիալ փուլն** է, որը բնորոշ է որոշ զարգացած երկրներին (օրինակ՝ Բրազիլիային), ինչպես նաև նախկին սոցիալիստական (անցումային տնտեսությամբ) երկրներին: Դրանց տնտեսության առաջատար ճյուղը **մշակող արդյունաբերությունն է:**

Տնտեսական զարգացման ամենաբարձր աստիճանի վրա են **հետարդյունաբերական (հետինդուստրիալ) երկրները**: Այդ երկրներում արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն առավել չափով են մեքենայացված, ավտոմատացված, էլեկտրոնացված, ինչի հետևանքով ազատված աշխատուժն իր ներդրումն է ունենում սպասարկման ոլորտում: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ), այսինքն՝ պետության տարածքում մեկ տարում ստացված ամբողջական եկամտի մեջ սպասարկման ոլորտի ճյուղերի բաժինը հասնում և նույնիսկ գերազանցում է 50%-ը:
Տարբեր երկրների տնտեսությունները համեմատելու նպատակով օգտագործվում են մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ համախառն ազգային արդյունքը, համախառն ներքին արդյունքը, մարդկության զարգացման համաթիվը, որոնց ավելի մանրամասն անդրադարձ է կատարվում 11-րդ դասարանում:

Համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) ցուցանիշ է, որն արտահայտում է միավոր ժամանակահատվածում (որպես օրենք մեկ տարում) ապրանքների և մատուցած ծառայությունների վերջնական ամբողջական արժեքը (գինը) արտահայտած շուկայական գներով: ՀԱԱ առանձնահատկությունն այն է, որ դրա հաշվարկում ներառում են ոչ միայն տվյալ երկրում բնակվող քաղաքացիների կողմից սպառված ապրանքների ու ծառայությունների արժեքը, այլ նաև արտերկրում բնակվող տվյալ ազգի ներկայացուցիչների տնտեսական ակտիվության արդյունքում ստացված եկամուտները:

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ցուցանիշ է, որն արտահայտում է միավոր ժամանակահատվածում (որպես օրենք մեկ տարում) տվյալ երկրի սահմաններում բնակչության կողմից սպառված ապրանքների և մատուցած ծառայությունների պետական գնումների և կապիտալ ներդրումների ամբողջական արժեքը (գինը) արտահայտած շուկայական գներով: ՀԱԱ-ից տարբերվում է նրանով, որ ՀՆԱ մեծության մեջ ներառված չէ արտասահմանում ծավալված գործունեության արդյունքում ստացված եկամուտը:
Երկրի տնտեսական զարգացման մասին որոշակի պատկերացում է տալիս մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, որը հաշվարկում են մեկ տարվա ամբողջ ՀՆԱ-ի ցուցանիշի և բնակչության թվաքանակի հարաբերակցությամբ: Սակայն այս ցուցանիշը չի տալիս ճշգրիտ պատկեր պետության զարգացման մասին, օրինակ՝ **2015** թ.-ի Քաթարի ցուցանիշը «նավթադոլլարների» շնորհիվ գերազանցել է Ֆրանսիայի ցուցանիշին, ինչը, բնականաբար, չի նշանակում, որ Քաթարն ավելի զարգացած է, քան Ֆրանսիան: Այդ է պատճառը, որ ՄԱԿ-ի մասնագետները երկրների իրական զարգացվածությունը բացահայտելու համար կիրառում են մարդկության զարգացման համաթիվը, որը բացի մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշը, նաև հաշվի է առնում երկրներում կյանքի միջին տևողությունը և բնակչության կրթական մակարդակը:



Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը

Քանի որ համաշխարհային տնտեսությունը կազմված է ազգային տնտեսություններից, հետևաբար նրա գլխավոր ոլորտները և դրանցում ներառված ճյուղերը համընկնում են ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքին:





Այսպիսով, համաշխարհային տնտեսության երկու հիմնական ոլորտներն են **նյութական արտադրության ոլորտը** և **ոչ արտադրական ոլորտը** կամ սպասարկման ոլորտը:

Նյութական արտադրության ոլորտում ներգրավվում են այն ճյուղերը, որոնց գործունեության **արդյունքը նյութական է** (օրինակ՝ մեքենա, կոշիկ, պահածո և այլն):

Արդյունաբերության ճյուղերից են **մետաղաձուլությունը** (սև, գունավոր), **վառելիքաէներգետիկ համալիրը, մեքենաշինությունը** (էլեկտրատեխնիկական, գործիքաշինություն, սարքաշինություն, ավտոմոբիլաշինություն և այն), **քիմիական, թեթև, սննդի արդյունաբերությունը** և այլն: **Գյուղատնտեսության** ճյուղերից են **անասնապահությունը** (խոշոր եղջերավոր, մանր եղջերավոր անասնապահություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, ձիաբուծություն և այլն), **բուսաբուծությունը** (խաղողագործություն, հացահատիկի, թելատու՝ բամբակենի, վուշ, յուղատու՝ արևածաղիկ, ձիթապտուղ, շաքարատու՝ շաքարեղեգ, շաքարի ճակնդեղ, և այլն մշակաբույսերի մշակությունը):



Տրանսպորտի ճյուղերից են ցամաքային (երկաթուղային, խողովակաշարային, ավտոմոբիլային), օդային, ջրային (ծովային, ներքին ջրային) և էլեկտրոնային տրանսպորտը: Իր հերթին ոչ արտադրական ոլորտի ճյուղերի գործունեության արդյունքը բնակչությանը մատուցվող բազմաբնույթ ծառայություններն են, որոնք միտված են բավարարելու մարդկանց սոցիալական և հոգևոր-մշակութային կարիքները:

Աշխատանքի աշխարհագրական բաժանում (ԱԱԲ): Աշխատանքի միջազգային բաժանում.

Ինչպես գիտենք, Երկիր մոլորակի բնությունն աչքի է ընկնում բազմազանությամբ: Քննարկենք կլիմայական պայմանների օրինակը: Մի երկրում տիրապետում են այնպիսի մեղմ կլիմայական պայմանները, որոնք բարենպաստ են օրինակ՝ ցորենի մշակության համար, իսկ մեկ այլ երկիր աչքի է ընկնում տաք ու խոնավ կլիմայով, որի դեպքում մշակում են բրինձ: Այս դեպքում առաջինը մասնագիտանում է ցորենի մշակությամբ, իսկ երկրորդը՝ բրնձի: Եթե այս երկրներում առաջանան նշված մշակաբույսերի բերքի ավելցուկ, ապա նրանք կարող են վաճառել այլ երկրների կամ միմյանց: Այսպիսով՝ յուրաքանչյուր երկիր արտադրում է որոշակի արտադրատեսակ (բերված օրինակում՝ բրինձ, ցորեն), որով էլ հետագայում մասնակցում է համաշխարհային առևտրին, դառնում աշխատանքի աշխարհագրական բաժանման ակտիվ մասնակից:

Ներկայումս զարգացած երկրները հիմնականում մասնագիտացել են բարձրորակ, բարդ կառուցվածք ունեցող ապրանքների, գիտատար արտադրությունների գծով (օրինակ՝ ԱՄՆ-ը՝ համակարգիչների արտադրության և բարձրագույն տեխնոլոգիաների, Ճապոնիան՝ ռոբոտաշինության գծով), իսկ զարգացող երկրները՝ հումքի և գյուղատնտեսական

արտադրանքի (օրինակ՝ Զամբիան՝ պղնձի արտադրության գծով): Հայաստանը մասնագիտացել է գինու- կոնյակի, թանկարժեք քարերի, գունավոր մետաղների (պղինձ, մոլիբդեն, ալյումին), պահածոների, մրգերի, չրերի և այլնի արտադրությամբ, որոնք արտահանում է այլ երկրներ:

Աշխատանքի միջշրջանային բաժանումն աշխատանքի աշխարհագրական բաժանումն է երկրի տնտեսական շրջանների միջև:

Ռուսաստանի Ուրալյան տնտեսական շրջանը մասնագիտացել է մետաղաձուլության, էներգետիկայի ուղղությամբ:

Ինչպես հայտնի է, աշխարհագրությունն այն գիտությունն է, որը պատասխանում է ոչ միայն «ի՞նչ» և «ինչու՞» հարցերին, այլև **«որտե՞ղ»** հարցին՝ նպատակ ունենալով ցույց տալ աշխարհագրական երևույթների դրսևորման **տարածական տարբերությունները**:

Տնտեսական օբյեկտները (գործարաններ, հանքավայրեր, բնակավայրեր, ճանապարհներ) նույնպես տարբեր կերպ են բաշխված տարածության մեջ, այսինքն՝ նրանց տեղաբաշխումը («որտե՞ղ են գտնվում» հարցի պատասխանը) տարբեր է աշխարհի տարբեր հատվածներում: Այդպիսի տարբերությունների պատճառներ կարող են լինել բնական ռեսուրսներն ու պայմանները (օր՝ ռելիեֆը, կլիման, օգտակար հանածոները և այլն), տարածքի ձևը և չափը, աշխատանքային ռեսուրսները և այլն, այսինքն՝ այն **բոլոր պայմանները**, որոնք որևէ կերպ **ազդում են** տնտեսության տվյալ ճյուղի վրա: Օրինակ՝ բրնձի մշակության համար նպաստավոր են տաք և խոնավ կլիման կամ արհեստական ոռոգման հնարավորությունը, որի բացակայության դեպքում վերջինիս աճեցումն արդյունավետ չէ (կամ հնարավոր չէ): Յուրաքանչյուր տարածք ունի բնական պայմանների և ռեսուրսների **յուրահատուկ համալիր**, որը նպաստում կամ խոչընդոտում է տնտեսության որևէ ճյուղի զարգացմանը: Ընդհանուր առմամբ տարբերում ենք տնտեսության տեղաբաշխման մի շարք գործոններ, որոնց հակիրճ կանդրադառնանք ստորև:

Տնտեսաաշխարհագրական դիրքի (ՏԱԴ-ի) գործոն: ՏԱԴ-ի գործոնի ազդեցությունը կապված է տվյալ տարածքի տնտեսաաշխարհագրական դիրքի հետ, թե որքանո՞վ է այն բարենպաստ կամ անբարենպաստ: Օր.՝ ծովափնյա աշխարհագրական դիրքը նպաստում է Վրաստանի տնտեսության զարգացմանը, իսկ Հայաստանի ցամաքային պետություն լինելը որոշակի խոչընդոտներ է ստեղծում:

Տարածքային գործոն: Տարածքը համարվում է ոչ միայն բնական ռեսուրս, այլ նաև բնական պայման: Նրա թե՛ մեծությունը, թե՛ մակերևույթի բնույթը մեծ ազդեցություն են թողնում տնտեսության զարգացման վրա:
Հարթավայրերում ավելի հեշտ է շինարարություն ծավալելը, քան լեռնային տարածքներում: Մեծ տարածք ունեցող պետությունները (օրինակ՝Ռուսաստան, ԱՄՆ, Չինաստան) ավելի ապահովված են բազմատեսակ բնական ռեսուսներով, իսկ Նիդերլանդները, Ճապոնիան ստիպված են տարածքներ «նվաճել» ծովից, որպեսզի նոր ճանապարհներ, օդանավակայաններ կառուցեն:

Բնառեսուրսային գործոն: Այս դեպքում շատ կարևոր է, թե ինչպիսի բնական պայմաններով և ռեսուրսներով է ապահովված տվյալ տարածքը: Եթե առկա են պղնձի, ոսկու հանքավայրեր, ապա հնարավոր է զարգացնել գունավոր մետաղաձուլությունը, իսկ նավթի, բնական գազի դեպքում՝ վառելիքաէներգետիկ համալիրը:
Մետաղաձուլությունը առավել հումքատար արտադրություններից է:
Տրանսպորտային գործոն: Այս դեպքում կարևորվում են հաղորդակցության գլխավոր ուղիների առկայությունը և տրանսպորտային ծախսերը, որոնք գնալով կրճատվում են ժամանակակից տրանսպորտի շնորհիվ:
Աշխատանքային ռեսուրսների գործոն: Այս գործոնի ազդեցությունը երկակի է. մի կողմից աշխատանքային ռեսուրսները (մարդիկ) ձգտում են այնպիսի վայրեր, որտեղ զարգացած են աշխատատար ճյուղերը: Մյուս կողմից՝ բնակչության խոշոր կուտակումների շրջանում, որտեղ էժան է աշխատուժը, զարգանում են տնտեսության **աշխատատար** ճյուղեր (օրինակ՝ Արևելյան և Հարավարևելյան Ասիա. Չինաստան, Թաիլանդ, Վիետնամ և այլն):
Տարածքային համակենտրոնացման գործոն: Այս դեպքում արտադրական ձեռնարկությունները կուտակվում են ոչ մեծ տարածքում՝ նպաստելով համեմատաբար ցածր ինքնարժեք ունեցող արտադրանքի թողարկմանը, ինչպես նաև սրելով բնապահպանական հիմնախնդիրները:

Էկոլոգիական գործոն: Այս գործոնը համեմատաբար նոր է և կապված է նրա հետ, թե տնտեսության տվյալ ճյուղն ինչպիսի՞ ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա:
Գիտատարության գործոն: Այս դեպքում կարևորվում են որակյալ կադրերի առկայությունը, քանի որ ձևավորվում են գիտատար ճյուղեր, օրինակ կենսատեխնոլոգիան, ռոբոտաշինությունը և այլն:

Ինչպես գիտենք, ողջ պատմության ընթացքում երկրների ազգային տնտեսությունները զարգացել են միմյանց հետ կապեր հաստատելով: Հին դարերում այդ կապերը բավական թույլ էին, քանի որ մարդիկ ի վիճակի չէին հաղթահարել բնության բազմաթիվ արգելքներ, ինչպես նաև չէին տիրապետում կապի այն միջոցներին, որոնք բնորոշ են ներկայիս հասարակությանը: Տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացը բավականին աշխուժացավ Աշխարհագրական Մեծ հայտնագործությունների արդյունքում (հիշում ենք Ք. Կոլումբոսի առաջին ճանապարհորդությունը 1492 թ.-ին): Նոր հայտնագործված տարածքներում ապրող բնակչությունը համեմատ Եվրոպացի նվաճողների՝ գտնվում էր տնտեսական զարգացման ցածր մակարդակի վրա, ինչից և օգտվում էին Եվրոպացիները՝ հաստատելով տնտեսական կապեր կամ յուրացնելով նոր տարածքների բնական ռեսուրսները: Այսպես՝ Եվրոպայում բավական պահանջված էին այն ապրանքները (համեմունքներ, արևադարձային պտուղներ, ազնիվ մետաղներ և այլն), որոնք ներկրվում էին նոր հայտնագործված տարածքներից, Հնդկաստանից, Չինաստանից և ասիական այլ երկրներից: Այսպիսով՝ ձևավորվեց **համաշխարհային շուկան**, որը համաշխարհային տնտեսության ձևավորման կարևոր նախադրյալն էր: Սակայն միայն առևտրային հարաբերությունների զարգացումը բավարար չէր համաշխարհային տնտեսության ձևավորման համար: Երկրորդ կարևոր նախադրյալը խոշոր **մեքենայական արտադրությունն** էր, որի արտադրանքը որպես ապրանք արտահանվում էր միջազգային շուկա: Խնդիրն այն է, որ մինչև արտադրության մեքենայացումը (ձեռքի աշխատանքի փոխարինումը մեքենաների, հաստոցների աշխատանքով), բազմաթիվ ապրանքների քանակն այնքան քիչ էր, որ հազիվ էր բավականացնում տեղական բնակչության պահանջարկը, հետևաբար չէր կարող արտահանվել կամ փոխանակվել համաշխարհային շուկայի շրջանակներում: 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում Եվրոպայում տեղի ունեցած **արդյունաբերական հեղափոխության** արդյունքում ստեղծված մեքենայացված արտադրամասերի, ֆաբրիկաների և գործարանների կառուցումը նպաստեցին արտադրվող արտադրանքի ծավալի զգալի աճին:

Տրամաբանական է, որ միայն արտադրանքի ավելցուկը և այլ երկրների կողմից ցանկությունը ձեռք բերել այդ ավելցուկը և փոխարենը վաճառել սեփական արտադրանքը բավարար չէ համաշխարհային տնտեսության գոյության մասին խոսելու համար, քանի որ դեռևս բաց էր մնում այդ ապրանքների տեղափոխության և հասցեատերերին հասցնելու խնդիրը, որը

լուծվեց **համաշխարհային երկաթուղային և ծովային տրանսպորտի** զարգացման շնորհիվ: Այսպիսով՝ համաշխարհային տնտեսության զարգացման երրորդ նախադրյալը տրանսպորտն էր և մասնավորապես շոգեքարշների ու շոգենավերի ստեղծումը: Համաշխարհային տրանսպորտի զարգացմանը մեծապես նպաստեցին ինչպես աշխարհագրական մեծ հայտնագործությունները (ծովային նոր ուղիներ), այնպես Եվրոպան Ասիային կապող ցամաքային ուղիների կառուցումը:

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսությունն ուրվագծորեն կարելի է պատկերել եռանկյան տեսքով, որի գագաթներն են արտադրությունը, տրանսպորտը և շուկան:



Արդյունաբերություն. Ընդհանուր բնութագիրը և տեղաբաշխումը.

Արդյունաբերությունը զբաղվում է ոչ միայն հումքի արդյունահանմամբ ու մշակմամբ, այլև էներգիայի տարբեր տեսակների փոխակերպմամբ: Այսպես օրինակ՝ էլեկտրակայաններում վառելիքի կամ երկրի ընդերքի ջերմությունը, ինչպես նաև դեպի վար հոսող ջրի և այլ աղբյուրներից ստացվող էներգիան փոխակերպվում է էլեկտրական էներգիայի:

Առանձնանցում են նաև **արդյունահանող և մշակող արդյունաբերական** ճյուղերի խմբեր:



Արդյունահանող արդյունաբերությունը ներառում է այն ճյուղերը, որոնք զբաղվում են Երկրի ընդերքից, ջրից (օվկիանոսային ծանծաղուտ, ծով, լիճ և այլն) և անտառներից տարբեր տեսակի հումքի կամ վառելիքի հանույթով, օրինակ՝ լեռնահանքային արդյունաբերությունը:
Լեռնահանքային արդյունաբերությունը ՀԱՀ-ի տնտեսության առաջատար ճյուղերից է:
Մշակող արդյունաբերությունը ներառում է այն ճյուղերը, որոնք զբաղվում են հումքի մշակմամբ կամ վերամշակմամբ: Ընդ որում՝ հումքը ստացվում է ոչ միայն արդյունահանող արդյունաբերության, այլ նաև գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության բնագավառներում: Նմանատիպ հումք օգտագործվում է օրինակ սննդի արդյունաբերության կողմից:

Պանրի արտադրությունը Շվեյցարիայի սննդի արդյունաբերության ավանդական ճյուղերից է:

Հին ճյուղեր են մետաղաձուլությունը և թեթև արդյունաբերությունը, իսկ **նոր ճյուղեր** են էլեկտրաէներգետիկան, մեքենաշինության ճյուղերի մեծ մասը և քիմիական

արդյունաբերությունը: Նորագույն ճյուղերից են ռոբոտաշինությունը, նանոտեխնելեգիաները և այլն:

Նորագույն՝ բարձր տեխնոլոգիական արտադրանք արտադրող ճյուղերը հիմնականում կենտրոնացված են բարձր զարգացած երկրներում, իսկ հին ճյուղերը՝ զարգացող երկրներում:

Արդյունաբերության տեղաբաշխումն ունի բավականին բարդ պատկեր, ինչը պայմանավորված է բնական, տնտեսական, սոցիալական ու էկոլոգիական բազմաթիվ գործոնների ազդեցությամբ: Դրանք անհրաժեշտ է հաշվի առնել, քանի որ արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղ ունի տեղաբաշխման իրեն **բնորոշ** հատկանիշներ: Օրինակ՝ պղնձաձուլության տեղաբաշխման գլխավոր հատկանիշը **հումքատարությունն** է, ալյումինաձուլությանը՝ էներգատարությունը, իսկ սարքաշինությանը՝ **աշխատատարությունը**:

Թեթև արդյունաբերությունն արդյունաբերության հին ճյուղերից մեկն է, որն աչքի է ընկնում աշխատատարությամբ:

Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն, զարգացման փուլերը.





Գյուղատնտեսություն.

Բուսաբուծության նյութական կառուցվածքը





Օրվա դասի պլան

Ուսուցիչ՝ Շ. Գաբոյան

Դասարան 7-րդ **Դասի տևողությունը՝ 45 րոպե**

Առարկա՝ աշխարհագրություն

Դասի թեմա՝ դաս 16 «Համաշխարհային տնտեսություն»

Դասի նպատակը՝

Օգնել սովորողներին ձևավորել գիտելիքներ համաշխարհային տնտեսության վերաբերյալ աշակերտների մոտ զարգացնել վերլուծական կարողություններ:

Դասի վերջնարդյունքը՝

ա/ սահմանել ինչ է համաշխարհային տնտեսությունը, երբ տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացն էապես աշխուժացավ:

բ/ ներկայացնել համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալները, սխեմատիկորեն, եռանկյան տեսքով կառուցի համաշխարհային տնտեսության նախադրյալները:

գ/ կարևորել տնտեսական աշխարհագրությունը, որ տեսանկյունից է ուսումնասիրում համաշխարհային տնտեսությունը:

դ/ գնահատել տնտեսական ճգնաժամերը ինչպես են անդրադառնում համաշխարհային և ազգային տնտեսությունների վրա, կատարի վերլուծություններ և եզրահանգումներ: Վերլուծել համաշխարհային տնտեսության դերն ու նշանակությունը ժամանակակից աշխարհում, գնահատել ժամանակակից մարտահրավերների ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա, առաջարկի լուծումներ:

Հիմնական հասկացություններ՝ համաշխարհային շուկա, համաշխարհային տնտեսություն, մեքենայական արտադրություն, համաշխարհային երկաթուղային և ծովային տրանսպորտ:

Միջառարկայական կապեր՝ աշխարհագրություն-մաթեմատիկա (եռանկյան սխեմա):

Կիրառվող մեթոդը՝ մտագրոհ, քարտեզագրում, հայտորոշիչ թեստ:

Անհրաժեշտ պարագաներ՝ Գիրք, տետր, քարտեզ:

Դասի ընթացքը.

1/ **Կազմակերպչական մաս** / 2-3 րոպե/ ներկա, բացակա:

2/ Դասի սկիզբ / 5-7 րոպե/

ա/ հին դասի հարցում հարցերի միջոցով ամփոփվում է նախորդ դասը:

1. Ի՞նչ ենք հասկանում տնտեսության տեղաբախշում ասելով (տալ սահմանում).
2. Ի՞նչ գործոններ են ազդում տնտեսության տեղաբաշխման վրա.
3. Գրատախտակին քարտեզագրե՛ք և համառոտ ներկայացրե՛ք տեղաբաշխման վրա ազդող գործոնները.

բ/ նոր նյութի նախապատրաստում . գրատախտակին գրվում է «Համաշխարհային տնտեսություն» բառակապակցությունը, որից հետո աշակերտները մտագրոհի օգնությամբ ասում են այն ինչ գիտեն և պատկերացնում են թեմայի շուրջ:

3/ Նոր նյութի ներկայացում / 20 րոպե/ կարճ դասախոսությամբ ներկայացվում է նոր դասը, բացատրվում է ինչ է համաշխարհային տնտեսությունը, երբ էապես աշխուժացան տնտեսական հարաբերությունները, թվարկվում են համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալները, որից հետո աշակերտները ինքնուրույն նշված նախադրյալները պատկերում են եռանկյան տեսքով, միջառարկայական կապ ստեղծելով մաթեմատիկայի հետ (եռանկյան գագաթներում նշվում են նախադրյալները): Դասի ներկայացումը ընթհանում է հարց ու պատասխանների և քննարկումների ուղեկցմամբ:

4/ Դասի ավարտ / 10-15 րոպե/

ա/ անդրադարձ յուրաքանչյուր աշակերտի բաժանվում է հայտորոշիչ թեստ տրվում է 7 րոպե ժամանակ այն լրացնելու համար: Ավարտից հետո ստուգվում են աշխատանքները, պարզաբանվում անհասկանալի հարցերը:

բ/ գնահատում այն աշակերտները, ովքեր կարողանում են ակտիվ մասնակցություն ցուցաբերել դասին, կարողանում են բարտեզագրել համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալները, ինչպես նաև կբերեն օրինակներ համաշխարհային տնտեսության և ազգային տնտեսության փոխադարձ կապերի մասին:

5/ Տնային հանձնարարություն դաս 16 համաշխարհային տնտեսություն: Տետրերում գրել մեկական օրինակ, թե ինչպես է համաշխարհային իրավիճակի վատթարացումը անդրադառնում ազգային տնտեսությունների վրա և հակառակը, ինչպես են առանձին խոշոր երկրների տնտեսությունները իրենց հերթին ազդում համաշխարհային տնտեսության վրա:

Հայտորոշիչ թեստ

1. Նշե՛լ սահմանների ճիշտ համապատասխանությունը: /2 մ /

Ազգային տնտեսությունը	Միջազգայինտնտեսական հարաբերություններով միմյանց փոխկապակցված աշխարհի բոլոր երկրների տնտեսությունների պատմականորեն ձևավորված ամբողջականությունն է:
Համաշխարհային տնտեսությունը	Տվյալ երկրում մարդկային գործունեության բնագավառների պատմականորեն ձևավորված համակարգն է:

2. Լրացնե՛լ բաց թողնված արտահայտությունը. / 1 մ /

Տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացն էապես աշխուժացավ

_____ին ժամանակաշրջանում:

3. Լրացնե՛լ համաշխարհային տնտեսության նախադրյալները: / 3 մ /

Համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալները.

4. Բերե՛լ մեկ օրինակ թե ինչպե՞ս է համաշխարհային տնտեսության վաթարացումը ազգային տնտեսության աճի տեմպերի վրա: / 2 մ /

_____

_____

_____

5. Բերել օրինակ թե՞ ինձպես է առանձին երկրների տնտեսության վաթարացումը անդրադառնում համաշխարհային տնտեսության վրա: / 2 մ /

_____

_____

_____

_____

Եզրակացություն

Դպրոցում աշակերտի կողմից դասի յուրացումը մեզ հնարավորություն է տալիս հասկանալու թե ինչպես է տեղի ունենում սովորելու գորընթացը, որով և պայմանավորված է ուսուցչի հաջողությունը: Այսօր աշակերտները շատ ինֆորմացված են, նրանց բավականաչափ զբաղեցնում են սոցիալական ցանցերը: Այլ կերպ ասած աշակերտը սովորելուն շատ քիչ ժամանակ է տրամադրում և որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի ուսուցիչը պետք է փորձի առաջին հերթին գրավել աշակերտների ուշադրությունը, որպեսզի աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Կարևոր է նյութի կապակցված ուսուցումը: Նոր գիտելիք ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը և, բանկանաբար, որքան շատ գիտելիքներ ունեն աշակերտները, այնքան հեշտ ու շատ կարող են նոր բաներ սովորեն: Եվ որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռնել:

Շատ կարևոր է, որ ուսման ընթացքում դաս բացատրելիս ուսուցիչը բերի մեկից ավելի օրինակներ, քանի որ այդ դեպքում նյութը հասկացող աշակերտների թիվը էապես կավելանա:Հաճախ ուսուցիչը միայն նշում է, թե ինչն է ճիշտ կամ սխալ, մինչդեռ շատ կարևոր է մանրամասնել, թե ինչու է դա սխալ: Երբ աշակերտներին առաջադրանք է տրվում, շատ կարևոր է, որ տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա:Այսօր հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները: Ինտերակտիվ մոտեցումները անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը է՛լ ավելի հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Յուրաքանչյուր դաս և յուրաքանչյուր դասարան տարբեր է, և մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մեկ այլ դասարանում չաշխատել: Յուրաքանչյուր նոր նյութ յուրացնելիս շատ կարևոր է դասի սկիզբը (մուտքը նոր դաս) և հաջող սկիզբը հնարավորություն է տալիս եռանդուն աշխատանքային պրոցես:Եթե ուսուցչին հաջողվի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դասը կլինի հետաքրքիր և արդյունավետ:

«Համաշխարհային տնտեսություն» թեման ուսումնասիրելիս կարելի է օգտագործել տարբեր հնարքներ: Դրանցից մեկը խորհրդավորությունն է՝ գաղտնիքի առկայությունը, երբ երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը: Կարելի է դասի վերնագիրը բնութագրել մեկ այլ արտահայտության տեսքով, որ աշակերտները իրենց արտահայտած մտքերով վեր հանեն դասի վերնագիրը: «Համաշխարհային տնտեսություն» թեման ուսումնասիրելիս գրատախտակին կարելի է գրել շուկա, արտադրություն և տրանսպորտ բառերը (ցրված տեսքով) և աշակերտներին առաջարկել, որ գտնեն այն հասկացությունը, որը միավորում է դրանց: Արդյունքում աշակերտները վեր են հանում «Համաշխարհային տնտեսություն» դասի վերնագիրը:Շատ

կարևոր է դասի ընթացքում օգտագործել միջառարկայական կապերը՝ մաթեմատիկայի, կենսաբանության, հայոց լեզվի և այլ առարկաների հետ: Դասապրոցեսում կարելի է օգտագործել նաև ԳՈՒՍ-ը, երբ ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակը, որի ձախ սունյակում գրվում է **գիտեմ,** կենտրոնում՝ **ուզում եմ իմանալ**, աջ սունյակում՝ **սովորեցի** բառերը: Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից է մտագրոհը, որի միջոցով ուսուցիչը հավաքում է աշակերտների մտքերը տվյալ թեմայի վերաբերյալ: Մտագրոհը կարելի է հանձնարարել նաև գրավոր, որպեսզի ակտիվ աշակերտները հնարավորություն տան թույլ աշակերտներին արտահայտվելու:

Նյութի մատուցման մեջ շատ կարևոր են կարճ դասախոսությունները, քարտեզագրումները, դիագրամների վերլուծումները: Նոր դասը բացատրելիս կարևոր է ժամանակ առ ժամանկ դադար տալ և ամփոփել նյութը, որպեսզի աշակերտի կողմից այն ընկալվի և հիմնավորվի: Ընթացքում կարևոր են նաև քննարկումները, երկխոսությունները, հարց ու պատասխանները: Շատ կարևոր է Վենի դիագրամի, հայտորոշիչ թեստի, Ֆրայերի մոդելի օգտագործումը:

Ֆրայերի մոդել



Մեկ այլ դեպքում կարելի է կիրառել գիտելիքների դոմինոն: Մեծ սեղանի շուրջ շրջանաձև նստում են աշակերտները: Յուրաքանչյուր աշակերտի տրվում է իր քարտը և կարդալով քարտի հարցը աշակերտները հաջորդաբար շրջանաձև այն դնում են սեղանին: Դրանք ճիշտ դասավորելու դեպքում աշակերտները ստանում են թեմային վերաբերվող գլխավոր հասկացությունը:

Կարևոր են նաև խմբային աշխատանքները: Խմբային աշխատանք կատարելիս շատ կարևոր է խմբի բոլոր անդամների մասնակցությունը: Թվարկված հնարքների ճիշտ օգտագործումը մեզ հնարավորություն է տալիս կատարել մեր առջև դրված խնդիրները և ապահովել հաջող վերջնարդյունք:

Գրականություն և հղումներ

1. Մանուկյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ. Միջազգային տնտեսական հարաբերությունների ուսումնական ձեռնարկ:
2. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020/
3. Ա.Մ. Հովակիմյան Համաշխարհային էկոնոմիկա և միջազգային տնտեսական հարաբերություններ:
4. Журнал «Мировое и национальное хозчйство».
5. Журнал «Международная экономика».
6. https://www.imdproc.am
7. https://hy.wikipedia.org